ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452-24.01.2020-ՊԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452[1]-24.01.2020-ՊԻ-011/0) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-452[2]-24.01.2020-ՊԻ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
1	**«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Աննա Կարապետյան**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենք	«Նոտարիատի մասին» օրենքի համաձայն նորտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու դեպքում ընունվում է նոտարական ակտ, ինչը ներառված չէ Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում: Այսինքն՝ 3-րդ մասում օգտագործվում է ,« գործի լուծման համար» բառերը, կամ , «եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար,» որոնք չեն ներառում նոտարական գործողության ընթացքը: Հետևաբար ստացվում է որ 3-րդ մասը նոր լրացվող նոտարի կողմից իրավաբանական նշանակություն	**Ընդունվել է:** Լրացում կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «գործի լուծման համար,» բառերից հետո լրացնել «կամ նոտարական ակտի կայացման համար» բառերը;	**Ընդունվել է:**

			ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալու վրա չի տարածվում: Առաջարկում է 3-րդ մասում լրացում անել նոտարական ակտի մասով, կամ լրացումն անել 338.1 հոդվածում:		
2.	**Կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենք	Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 3-րդ մասում «վճիռ կամ որոշում կայացնելը» բառերից հետո լրացնել հետևյալ բառեր «կամ նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողության ընթացքում մինչև նոտարական ակտ կայացնելը»:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**